ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

02 հոկտեմբերի 2011 թվական թիվ 75-Ա

Մ-6 ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ 83-ՐԴ ԿՄ-Ի ԱԿՏԻՎ ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՓԼՈՒԶՎԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ 728 հրամանագրի 1.22 կետով, հիմք ընդունելով "ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի 2011 թվականի հիմնական միջոցառումների պլան"-ով նախատեսված պահանջները՝

կ ա ր գ ա դ ր ո ւ մ ե մ.

1. Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 83-րդ կմ-ի ակտիվ սողանքային երևույթների հետևանքով փլուզված հատվածում վթարավերականգնողական և փրկարարական աշխատանքներ կազմակերպելու նպատակով ստեղծել օպերատիվ շտաբ՝ հետևյալ կազմով.

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ	–	ՀՀ Տավուշի մարզպետ, օպերատիվ շտաբի պետ
Լ.Սարգսյան	-	ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ, օպերատիվ շտաբի պետի տեղակալ
Վ.Վարդապետյան	-	ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ, օպերատիվ շտաբի պետի տեղակալ
Վ.Վարդանյան	–	ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետ
Վ.Հովսեփյան	–	ՓՄՎ պետ, ՓԾ փոխգնդապետ,օպերատիվ շտաբի պետի տեղակալ
Վ.Սարգսյան	–	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, ինժեներական ծառայության պետ
Ա.Սարգսյան	-	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ, տրանսպորտի ծառայության պետ
Ռ.Ներսեսյան	-	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, նյութատեխնիկական մատակարարման պետ
Մ.Մխիթարյան	-	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

Կ.Դովլաթբեկյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, բուժծառայության պետ

Ա.Ղալթախչյան - ՀԷՑ "Աղստև" մասնաճյուղի տնօրեն, էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ

2. Տավուշի ՄՓՎ պետ, փ/ծ փոխգնդապետ Վ.Հովսեփյանին. փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու նպատակով՝

1) իրականացնել սողանքային հատվածի հետախուզման աշխատանքներ

2) ճշտել առաջին կանչի ուժերի անհրաժեշտ քանակը

3) իրականացնել որոնողափրկարարական աշխատանքներ՝ տուժածներ հայտնաբերելու ուղղությամբ:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, բուժծառայության պետ Կ.Դովլաթբեկյանին. պատրաստականության բերել առաջին բուժօգնության բրիգադները:

4. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ, տրանսպորտի ծառայության պետ Ա. Սարգսյանին.

1) ճշտել սողանքային գոտին շրջանցող ճանապարհի վիճակը

2) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ շրջանցիկ ճանապարհի շահագործումը կազմակերպելու համար:

5. ՀԷՑ "Աղստև" մասնաճյուղի տնօրեն, էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ Ա.Ղալթախչյանին. ապահովել սողանքային գոտու հարակից համայնքներին անխափան էներգամատակարարումը:

6. Մարզպետարանիաշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, ինժեներական ծառայության պետ Վ.Սարգսյանին. պատրաստականության բերել ծանր ինժեներական տեխնիկայի պահանջվող քանակը:

7. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետ, հասարակական կարգի պահպանման ծառայության պետ Վ.Վարդանյանին. տեղում սահմանել շուրջօրյա հերթապահություն, երթևեկությունը իրականացնել Վանաձոր-Դիլիջան-Իջևան-Բագրատաշեն երթուղով:

8. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, նյութատեխնիկական մատակարարման պետ Ռ.Ներսեսյանին. վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

9. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Մխիթարյանին. համագործակցել համայնքների հետ, սողանքային գոտում փրկարարական անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու նպատակով ներգրավել կամավորական խմբեր:

10. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

02 հոկտեմբերի 2011թ.
ք.Իջևան